**Նախագիծ**

**Երկրորդ ընթերցում**

**Կ-145-04.10.2017-ՏՏԳԲ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՕՐԵՆՔԸ**

**«ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Սահմանամերձ համայնքների սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության 2014 թվականի դեկտեմբերի 1-ի ՀՕ-203-Ն օրենքի (այսուհետ՝ օրենք) 1-ին հոդվածում «համայնքներին» բառը փոխարինել «համայնքների բնակավայրերին (այսուհետ՝ սահմանամերձ համայնք)» բառերով:

**Հոդված 2.** Օրենքի 7-րդ հոդվածում «2018» թիվը փոխարինել «2021» թվով:

**Հոդված 3.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Երկրորդ ընթերցում

Կ-145-04.10.2017-ՏՏԳԲ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

# «ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

~~**Հոդված 1.** «Սահմանամերձ համայնքների սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության 2014 թվականի դեկտեմբերի 1-ի ՀՕ-203-Ն օրենքի 7-րդ հոդվածում «2018» թիվը փոխարինել «2021» թվով:~~

**Հոդված 1.** «Սահմանամերձ համայնքների սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության 2014 թվականի դեկտեմբերի 1-ի ՀՕ-203-Ն օրենքի (այսուհետ՝ օրենք) 1-ին հոդվածում «համայնքներին» բառը փոխարինել «համայնքների բնակավայրերին (այսուհետ՝ սահմանամերձ համայնք)» բառերով:

**Հոդված 2.** Օրենքի 7-րդ հոդվածում «2018» թիվը փոխարինել «2021» թվով:

**Հոդված 3.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

145-04.10.2017-ՏՏԳԲ

**Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ**

**«ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**

| **Առաջարկի (փոփոխության, լրացման) հեղինակը.** | **Առաջարկության բովանդակությունը** | **Առաջարկը (փոփոխությունը, լրացումը)** | **Առաջարկը (փոփոխությունը, լրացումը) ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հիմնական զեկուցողի եզրակացությունը** | **Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը** |
|---|---|---|---|---|
| 1. | 2. | 3. | 4. | 5. |
| ՀՀ ԱԺ պատգամավոր Արաիկ Հովհաննիսյան<br><br>Բանավոր առաջարկություն | Սահմանամերձ համայնքների խոշորացման արդյունքում խոշորացված համայնքի կազմում ընդգրկվել են ինչպես նախկին սահմանամերձ, այնպես էլ ոչ սահմանամերձ համայնքներ:<br>Առաջարկվում է օրենքի նախագծով ընդգծել, որ օրենքի կարգավորումները տարածվում են մինչև համայնքների խոշորացման գործընթացը հաստատված ցանկում ընդգրկված սահմանամերձ համայնքների բնակավայրերի վրա:***(հոդված 1. վերաշարադրել)*** | «**Հոդված 1.** «Սահմանամերձ համայնք-ների սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հան-րապետության 2014 թվականի դեկտեմբերի 1-ի ՀՕ-203-Ն օրենքի (այսուհետ՝ օրենք) 1-ին հոդվածում «համայնքներին» բառը փոխարինել «համայնքների բնակավայրերին (այսուհետ՝ սահմանամերձ համայնք)» բառերով:»: | Առաջարկությունն ընդունվել է:<br>Կատարվել է համապատասխան փոփոխություն | Ընդունելի է: |